

## ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

### ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ

Ամփոփագիր: Յոդվածում քննարկվում են Եվրասիական արժութային միության ստեղծման դեպքում Հայաստանի առջև ծառանալիք մարտահրավերները: Եվրատարածքում Յունաստանի փորձի զուգահեռ միջոցով ցույց է տրվում, թե ինչ վտանգներով են հղի ազգային արժույթի և ինքնուրույն դրամավարկային քաղաքականություն իրականացնելու հնարավորության կորուստները: Յոդվածում փաստարկվում է, որ թեպետ Ռուսաստանի հետ ընդհանուր արժույթը Հայաստանի տնտեսության համար նշանակալի առավելություններ է պարունակում, սակայն ցնցումների նկատմամբ Հայաստանի տնտեսությունն ավելի խոցելի է դարձնում:

Ռուսաստանը շահագրգուված է Եվրասիական արժութային միության (ԵԱՄ) ստեղծմամբ, և այդ երկրի պետական ու վերջինին հարակից ակադեմիական շրջանակները տարփողում են միասնական արժութային տարածքի գրավչությունը՝ այն ներկայացնելով իբրև կայունության կղզյակ և ապագա համաշխարհային ճգնաժամերի ազդեցությանը դիմակայելու հուսալի պատվար [1]: Այդ ուղղությամբ Ռուսաստանի ակտիվությունը հատկապես ծավալվեց 2015թ-ին Ռուսաստանի նախագահի հրամանագրից հետո [2], բայց Ղազախստանի կոչտ մերժողական վերաբերմունքից և Հայաստանի ու Բելառուսի՝ ԵԱՄ-ի խնդիրը հետաձգելու հորդորներից [3] հետո Ռուսաստանն առկախեց խնդիրը: Սակայն պատեհ պահին ԵԱՄ-ի խնդիրը դարձյալ դրվելու է օրակարգում [4]:

2015թ-ին ԵԱՄ-ի առաջմղումը համընկավ հունական պարտքի ճգնաժամի սուր շրջանի հետ: Յունաստանը գտնվում էր սնամկացման եզրին, որից խույս տվեց սուկ նրա շնորհիվ, որ վարկատումները (Եվրատարածքի երկրները, Եվրոպական կենտրոնական բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը) վերջին պահին տրամադրեցին նոր պարտք (86մլրդ եվրո)՝ նախորդը մարելու համար: Արդյունքում՝ Յունաստանի արտաքին պետական պարտքը ներկայում կրկնակի գերազանցում է ՀՆԱ-ն և յուրաքանչյուր բնակչի հաշվով կազմում է շուրջ 35հզ եվրո:

Հատկանշական է, որ նոր պարտքը տրվեց հունական կառավարության էական զիջումների դիմաց, որոնք ներառում էին հանրային ծառայողների վարձատրության կրծատումը, հանրային սեփականության վաճառքը, շահույթի և ավելացված արժեքի հարկնան դրույքների աճը: Փաստորեն՝ Յունաստանը Եվրատարածքի անդամ լինելու պատճառով զրկված լինելով ինքնուրույն մոնետար քաղաքականություն վարելու հնարավորությունից, պարտքի ճգնաժամի հետևանքով պարտավորված է վարել

սահմանափակող ֆիսկալ քաղաքականություն, և դեռ ավելին՝ հարկադրված է շարունակաբար ընդլայնել պարտքը՝ առկա պարտքը մարելու համար:

Ահա թե ինչու՝ «հունական ողբերգությունը» ցայտուն վկայությունն է այն մարտահրավերների, որոնց բախվում է արժութային միության ծայրամասային երկիրը, որի արտադրողականությունը զգալիորեն ցածր է այդ միության կենտրոնական երկրից:

Հոդվածի նպատակն է հունական փորձի համատեքստում քննել՝ արդյոք պատրանքային չեն Եվրասիական արժույթին՝ Եվրազին [6], վերագրվող առավելությունները:

**Արժութային միության տեսությունը:** Արժութային միության (ԱՄ) օպտիմալ տարածքի (օպտիմալ՝ լրիվ զբաղվածություն, գների կայունություն և արտաքին հավասարակշռություն ապահովելու առումով) թեկնածուներ են այն երկրները, որոնց տնտեսությունները բազմազանված են և որոնց միջև առկա է (ա) ինտենսիվ առևտուր, (բ) տնտեսական շրջափուլերի դրական համահարաբերակցում, (գ) ռեսուրսների (հատկապես աշխատուժի) տեղաշարժելիություն, (դ) ֆիսկալ փոխանցումների մեխանիզմ [7]:

Առևտուրի ինտենսիվությունից և ռեսուրսների տեղաշարժելիությունից է բխում արժութային միության անդամակցության հիմնական օգուտը՝ գործառնական ծախսերի, արժութային ռիսկի, անորոշության կրծատում: Սակայն արժութային ռիսկի կրծատումն անհրաժեշտաբար չի նշանակում ռիսկի ընդհանուր մակարդակի կրծատում, քանի որ միասնական արժույթը կարող է սրել պարտքի չմարման ռիսկը:

Տնտեսական շրջափուլերի աներդաշնակությունից է սերում անդամակցության հիմնական վտանգը՝ շրջափուլին հակառակ ինքնուրույն մոնետար քաղաքականություն իրականացնելու հնարավորության կորուստը (և տոկոսադրույթի, և փոխարժեքի տեսանկյունից):

Իսկ ֆիսկալ փոխանցումների մեխանիզմը հրամայական է զարգացման անհամաշխատությունները հարթելու և ոչ համաշափ ցնցումներին արձագանքելու համար:

Միևնույն ժամանակ, առևտուրի ու ռեսուրսների հոսքի ինտենսիվությունը և շրջափուլերի ներդաշնակությունը ներծին են [8]: ԱՄ-ին անդամակցելուց առևտուրի ու ռեսուրսների հոսքի ինտենսիվության աճն ակնկալելի է, բայց համընթաց հավանական է շրջափուլերի համահարաբերակցման փոփոխություն: Այսպես, ԱՄ-ի անդամ երկրներն ավելի հավանական է՝ մասնագիտանան իրենց համեմատական առավելության ոլորտներում՝ արդյունքում ավելի խոցելի դաշնալով այդ ոլորտներին ներհատուկ ցնցումների նկատմամբ, ինչից տնտեսական շրջափուլերն ավելի կտարամիտվեն:

Անշուշտ, երբ առևտուրը գլխավորապես ոչ թե միջ-, այլ ներճյուղային է, կամ գերիշխում են ընդհանուր ցնցումները, առևտուրի և ռեսուրսների ինտենսիվ հոսք

դեպքում շրջափուլերը ներդաշնակելու միտում են դրսնորում: Այդ պատճառով՝ ԱՄ-ի օպտիմալ թեկնածու են այն երկրները, որոնք ունեն զարգացման մոտ մակարդակ և տնտեսության նման կառուցվածք:

Արժութային միության բոլոր երկրներում վարչում է միևնույն մոնետար քաղաքականությունը, որն ի թիվս այլնի ենթադրում է միևնույն բազային տոկոսադրույթի սահմանում: Արդյունքում՝ երկրների փաստացի տոկոսադրույթները տարբերվում են երկրի վարկային ռիսկի մեծությամբ:

Միասնական տոկոսադրույթը ոչ միայն բարձրացնում է միության ծայրամասային երկրներում քաղաքական և զբաղվածության անցանկալի տատանումների հավանականությունը, այլև դանդաղեցնում է ամբողջական պահանջարկի անկման ժամանակ տնտեսության վերականգնման ընթացքը և համապատասխանորեն խորացնում է ընթացիկ հաշվի անհավասարակշռությունը:

Այսպես՝ երբ երկիրը վարում է ինքնուրույն մոնետար քաղաքականություն, ապա ամբողջական պահանջարկի անկմանն արձագանքում է կրճատելով տոկոսադրույթը: Արժութային միությունում, սակայն, քաղաքականությունը լավագույն դեպքում պետք է համապատասխանեցվի ընդհանուր (միջին) պահանջներին: Արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ տոկոսադրույթը չափից ավելի բարձր է այն երկրներում, ուր գործազրկությունն աճում է, և ցածր է այն երկրներում, ուր, ընդհակառակը, աշխատավարձերն են բարձրանում: Ավելի հաճախ, սակայն, քաղաքականությունը համապատասխանեցվում է գերիշխող երկրի պահանջներին: Եվրատարածքում (ԵՏ) դա գերմանիան է, քանի որ վերջինի տնտեսությունը գերիշխող դիրք ունի ԵՏ-ում (ընդհանուր ՀՆԱ-ի 29%-ը): Բայց շատ ավելի գերիշխող կլինի Ռուսաստանի դիրքը ԵԱՄ-ում (ընդհանուր ՀՆԱ-ի 84%-ը):

**Յունական ողբերգությունը:** Յունաստանը ԵՏ-ում փոքր երկիր է (Յունաստանի կշիռը ընդհանուր ՀՆԱ-ում 2.1% է): 2001թ-ին, երբ Յունաստանն անդամակցեց ԵՏ-ին, մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (համարժեք գնողունակությամբ, հաստատուն գներով) ԵՏ միջինի 75% էր: Ներկայում այն 66% է [9]:

2001-08թ-ին Յունաստանում մեկ զբաղվածի հաշվով իրական վարձատրությունն ընդլայնվել էր 24.5%-ով, իսկ աշխատանքի արտադրողականությունը՝ 17%-ով: Միևնույն ցուցանիշները ԵՏ-ում ընդլայնվել էին համապատասխանաբար 3.5%-ով և 8%-ով [10; 11]: Դրանով իսկ, իրական համեմատական վարձատրությունն աճել էր շուրջ 1.11 անգամ ավելի, քան համեմատական արտադրողականությունը:

Արդյունքը Յունաստանի մրցունակության անկումն էր, ինչը դրսնորվում էր ապրանքների առևտորի պակասորդում, որը 2000թ-ին արտահանման 158% էր, իսկ 2008թ-ին 205% [9]:

Անդամակցելով ԵՏ-ին Հունաստանն իրեն զրկել էր ազգային արժույթն արժեգրկելու միջոցով մրցունակությունը վերականգնելու միջոցից:

Ուստի՝ մրցունակության վերականգնան իրագործելի միջոցը աշխատավարձերի կրճատումն էր: 2008-2015թթ.-ին մեկ զբաղվածի հաշվով իրական վարձատրությունը ԵՏ-ում աճել է 5%-ով, Հունաստանում կրճատվել է 15.5%-ով [11]: Չնայած նման նշանակալի ճշգրտմանը՝ Հունաստանում գործազրկությունը 2008թ.-ի 7.8%-ի համեմատ 2015թ.-ին 25.1% էր [10], իսկ ՀՆԱ-ի գումարային անկումը 2008-15թթ.-ին՝ 26% [12]:

Հունաստանն իր մրցունակությունը կարող էր բարելավել արտադրողականության աճի միջոցով, բայց դա սույն տեսական հնարավորություն էր: Դրա համար ի թիվս այլնի անհրաժեշտ է չկոռումպացված համակարգ, որն ապահովում է տնտեսական խթանների առաջնայնություն, իրավունքի գերակայություն և բոլորի համար ելքային հնարավորությունների հավասարություն: Բայց եթե Հունաստանում համակարգն այդպիսին լիներ, այն ի սկզբանե չէր հայտնվի ներկա թակարդում (2015թ.-ին կոռուպցիայի ընկալման համաթվով ԵՏ-ում Հունաստանից հետ էր միայն Իտալիան): Հունական դեմոկրատիայի «նվաճումների» հատկանշական օրինակ է հենց 2015թ.-ի 86նլրդ եկորյի վարկային պայմանագրի ստորագրումը: Համապետական հանրաքվեով հույները դեմ արտահայտվեցին (մասնակիցների 61.3%-ը) վարկավորման պայմաններին, բայց չնայած դրան կառավարությունն ընդունեց բոլոր պայմանները:

**Եվրազր և կայունության երազր:** ԵԱՄ-ն Հայաստանում դրական գարգացումներ կապահովի բազում բնագավառներում: Նախ և առաջ այն կվերացնի առևտուի և ներդրումների բնագավառում առանցքային գործընկեր երկրի՝ Ռուսաստանի արժույթի նկատմամբ դրամի փոխարժեքի տատաննան անորոշությունը և կզորյացնի այդ արժույթների փոխանակման հետ կապված գործառնական ծախսերը: Արժութային ռիսկի կրճատումը կիսքանի առևտուրն ու ներդրումները, ինչն էլ կնպաստի Հայաստանում մրցակցության ինտենսիվացմանը, արտադրողականության աճին, հակամենաշնորհային քաղաքականության բարեփոխմանը, առևտուրն մասնագիտացման խորացմանը, գների կայունությանը:

Նման գարգացումներն ինքնաբերաբար կիսքանեն Հայաստանում աշխատանքային եկամուտների աճը՝ ինչպես տեղական շուկայում զբաղվածների, այնպես էլ արտագնա աշխատողների համար, առավել ևս, որ արտագնա աշխատանքի հնարավորությունների ընդլայնումն էլ ավելի մրցակցային կդարձնի աշխատուժի հայկական շուկան:

Դրական գարգացումների նման տեղատարափի համատեքստում դժվար չէ պատկերացնել մի իրավիճակ, երբ Հայաստանն ու Ռուսաստանը ԵԱՄ անդամ են, և երկուսում էլ ռեսուրսները լրիվ զբաղված են: Համարենք՝ տեղի է ունենում ոչ համաշափ

տնտեսական ցնցում, որն ամբողջական պահանջարկն ընդլայնում է Ռուսաստանում, բայց կրծատում է Հայաստանում: Միանգամայն ակնկալելի է, որ ԵԱՄ կենտրոնական բանկը նախ և առաջ կկարևորի Ռուսաստանում գնաճի կանխունը և այդ նպատակով կիրագործի զսպող մոնետար քաղաքականություն, ինչից տնտեսական անկումն էլ ավելի կխորանա Հայաստանում:

Բանկի նման քաղաքականությունը կլինի բնականոն ոչ միայն այն պատճառով, որ Ռուսաստանը ԵԱՄ-ի բոլոր կառույցների որոշումների ընդունման մեջ թելադրող դիրք է ունենալու, այլև այն պատճառով, որ Ռուսաստանի բնակչության թվի բազմապատիկ ավելին լինելու պատճառով այստեղի գնաճը կանխելու սոցիալական և մարոկային կարևորությունը նույնպես գերիշխող կլինի:

Արդյունքում՝ ճշգրտման ողջ ծանրությունը կկրի Հայաստանի տնտեսության իրական հատվածը, քանի որ այլևս մոնետար որոշումներն ընդունվելու են Հայաստանից դուրս:

Ոչ համաչափ ցնցումները միանգամայն հավանական են, քանի որ Հայաստանի ու Ռուսաստանի տնտեսությունների կառուցվածքը էապես տարբեր է: Դրա դրսևորումներից է օրինակ՝ գյուղատնտեսության կշիռը ՀՆԱ-ում, որը Հայաստանում 20% է, Ռուսաստանում՝ 4%: Համապատասխանորեն՝ գյուղատնտեսությունում գրաղվածների կշիռն ընդհանուր աշխատուժի մեջ Հայաստանում 36% է, Ռուսաստանում՝ 7%: Ընդ որում, գյուղատնտեսությունում արտադրողականությունը (մեկ գրաղվածի հաշվով ավելացված արժեքը) Հայաստանում Ռուսաստանի համեմատ շուրջ 1.6 անգամ բարձր է [9], և Հայաստանի հետագա նասնագիտացումն այդ ոլորտում հավանական է, ինչը ոչ համաչափ ցնցումների հավանականությունը մեծացնելու է:

Ոչ համաչափ ցնցումները հավանական են նաև էներգակիրների արտահանումից Ռուսաստանի, և դրանց ներմուծումից Հայաստանի կախվածության հետևանքով: Ռուսաստանի դաշնային բյուջեի եկամուտների 50%, արտահանման 70%, ՀՆԱ-ի 25% ծևավորվում է էներգակիրների արտահանումից [13]: Իսկ Հայաստանում էներգակիրները ներմուծման շուրջ 20% են: Համապատասխանորեն՝ էներգակիրների գների տատանման ուղղակի ազդեցությունը երկու երկրների վրա հակամետ է: Էապես տարբեր է նաև երկու երկրների կախվածությունը մետաղների ու մետաղական հանքաքարի միջազգային գներից, այն դեպքում, երբ այդ ապրանքախմբերի արտահանումից Հայաստանի կախվածությունը խիստ նշանակալի է: Այսպես՝ արտահանման կառուցվածքում դրանց կշիռը Ռուսաստանում 10% է, այնինչ Հայաստանում 45% է:

Արժութային միությունը կրերի նաև ֆինանսական շուկայի ինտեգրման և Հայաստանում տոկոսադրույքների նվազման, քանի որ Ռուսաստանում տոկոսադրույքները Հայաստանի համեմատ գգալիորեն ցածր են: Այսպես՝ 2008-14թթ-ին

Վարկավորման միջին իրական տոկոսադրույքը Հայաստանում 12.5% էր, Ռուսաստանում՝ 1.2% [9]:

Ընդհանուր դեպքում անվիճելի է, որ տոկոսադրույքների անկումը նպաստելու է ներդրումների աճին: Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանի տնտեսության իրական հատվածում ներդրումներն արգելակող գործոնների թվում տոկոսադրույքի մակարդակը առաջնային դիրք չի գրավում: Այդ պատճառով տոկոսադրույքների անկումը գլխավորապես նպաստելու է անշարժ գույքի շինարարության և հիպոտեկային շուկայի ընդլայնմանը (այդտեղից էլ նոր գնային պղպջակի վտանգը), ինչպես նաև երկարատև սպառման ապրանքների (որոնք Հայաստանում գրեթե բացառապես ներմուծվում են) պահանջարկի աճին: Այնպես որ՝ տոկոսադրույքների կրծատումից նախ և առաջ բարգավաճելու են կառուցապատողները, օտարերկրյա արտադրողները և բանկերը:

Ցածր տոկոսադրույքները բերելու են նաև կառավարության սպառման ընդլայնմանը: Ընդհանուր դեպքում, այդ սպառման աճն իհարկե բարեբեր ազդեցություն ունի հասարակության համար, քանի որ ուղղվում է նաև սոցիալական ծրագրերի ընդլայնմանը: Սակայն նույնիսկ ամենաարդյունավետ օգտագործման դեպքում այդ ծրագրերը ծառայում են գրեթե բացառապես ընթացիկ սպառման աճի նպատակին, առանց որևէ կերպ ներգործելով երկարաժամկետ աճի հեռանկարի վրա:

ԵԱՄ-ի բացասական ազդեցությունների թվում է կառավարության՝ ֆինանսական միջոցներ ներգրավելու հնարավորության սահմանափակումը: Արժույթով, որի էմիսիան Հայաստանը վերահսկում է, պարտք վերցնելու հնարավորությունը վերանալու է, ինչից բարձրանալու են պարտքի չնարման ռիսկը և հետևաբար՝ պարզավճարը:

Պետական պարտքի աճի հավանականությունը մեծանում է նաև ինքնուրույն մոնետար քաղաքականություն իրագործելու անհնարինությամբ: Անհամաշակ տնտեսական ցնցման դեպքում տնտեսության վրա ազդեցության առավել գործուն գործիքը մնալու է հարկաբյուջետային ընդլայնումը, ինչը ֆինանսավորելու համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների առավել հավանական աղբյուրը դարձյալ լինելու է Ռուսաստանը: Պարտքի բեռի աճն էլ անխուսափելիորեն ավելի է սահմանափակելու երկրի մանրնելու հնարավորությունները:

Արդյունքում՝ միասնական արժույթը բերելու է Ռուսաստանի հեգեմոն դիրքի հետագա ամրապնդման՝ սահմանափակելով մյուս երկրների տնտեսական քաղաքականության ինքնուրույնությունը և խոստացվող կայունության փոխարեն այդ երկրներին ավելի խոցելի է դարձնելու տնտեսական ցնցումների նկատմամբ:

1. Красавина Л., Концепция регионального экономического и валютного союза, «Деньги и кредит», 2015(7), № 33: Кузнецов В.С., Валютный союз - будущее ЕАЭС, «Вестник МГИМО», 2015, 2(41), № 171: Навой А., Валютно-финансовые критерии конвергенции в ЕАЭС, «Деньги и кредит», 2015(6), № 6:
2. Парламентская газета, Путин поручил ЦБ и кабмину проработать вопрос о создании валютного союза, 10.III, 2015:
3. Ведомости, Казахстан исключил введение единой валюты в ЕАЭС, 22.IV, 2015: Chilcote R., Kudrytski A., Belarus strongman balances between Ukraine war, Putin, EU, Bloomberg, 2.IV, 2015: Panarmenian.net, Глава ЦБ Армении считает преждевременными разговоры о единой валюте ЕАЭС, 2.XI, 2015:
4. Взгляд, Путин ответил на вопрос о валюте ЕАЭС, 14.IV, 2016: Евразиацентр, Христенко: Валютный союз вряд ли будет создан ранее 2025 года, 15.XII, 2015:
- 5.
6. РИА Новости, Единая валюта для стран ЕАЭС может называться евраз, 9.XI, 2015:
7. McKinnon R.I., Optimum currency areas, «American Economic Review», 1963, 53(4), № 717: Mundell R.A., A theory of optimum currency areas, «American Economic Review», 1961, 51(4), № 657: Kenen P., The theory of optimum currency areas: an eclectic view, «International Economic Integration», 1998, № 59-77: Ingram J.C., State and regional payments mechanisms, «Quarterly Journal of Economics», 1959, 73(4), № 619: Delors J., Regional implications of economic and monetary integration, Report on EMU, 1989:
8. Frankel J.A., Rose A.K., The endogeneity of the optimum currency area criteria, «The Economic Journal», 1998, 108(449), № 1009:
9. World Bank, World development indicators, 2016, data.worldbank.org:
10. OECD, Level of GDP per capita and productivity, 2016, stats.oecd.org:
11. European Commission, AMECO, Nominal compensation per employee: total economy, 2016, ec.europa.eu/economy\_finance/ameco:
12. UNECE, Statistical database, 2016, unece.org:
13. Oil & Gas 360, Will Russia survive the oil & gas downturn?, 15.X, 2015: